

ԲԱԺՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկ. 50 Ղրշ
Վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀՄՆ
Տարեկ. 13 ֆր
Վեցամս. 7 "

Ամերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻ
→←



ԳԱՅՄԱՆԲ

Գլխավոր խոսք
Հին տրուիր

Ծանուցումներ
մասնավոր պայ
մաններով

Հասցե

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ը. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 28 ՀԱՆԻՇԱԲԹԻ 1904

ԹԻԻ 302

ՆՈՐ—ԳԱՐ ԿԱԹՆԱՐԱՆԸ ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ Է.
որով Տնօրէնն է համակրելին Տ. Յ. Ղազիկեան.
Անարատ կաթ և մաքուր սպասարկութիւն.
Դիմել Սարաֆիյէ՝ Շատր-Պաթըխ փողոց թիւ 2՝

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՊԷՇԻ ՎԵՀԱՊԵՏԸ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ՅԱՐՈՒԹԻՆ ՊԱՏՐԻԱՐԺԸ

Հապէշիստանի Վեհ. Մենելիք թագաւորը՝
այս անգամ Երուսաղէմայ Ս. Պատրիարքին շը-
նորհներ է Եթովպական Կայսրութեան Աստղ պատ-
ուանչանի կարմիր ժապաւէնը՝ երկու տուփերու
մէջ դրուած՝ հանդերձ իր հրովարակով, որ
գրուած է նուրբ մագաղաթի վրայ, շրջանակ-
ուած ծաղկանկար ու ոսկեզօծ զարդերով, և ճա-
կատը կը կրէ եզեր թագաւորական մեծ կնիքը.
Սոյն պատուանչանը Հապէշիստանէն շըր-
կուած կայսերական յատուկ պտտգամաւորութեան
մը ձեռքով յանձնուած է Ս. Պատրիարքին:

Պատճեն Հրովարակի

«Ես Մենելիք Բ. Կայսր կայսերաց Եթովպիոյ
եւ թագապսակեալ յԱստուծոյ, ի ցեղէ Յուդայի
Սեւամորթ Որդւոց, կը յայտնեմ թէ հրովար-
տակս կրող Հայոց Բաբարաշնորհ Հոգեւոր Հայր Տ.

Յարութիւն Պատրիարք առ Իս տաժած սէրը և
բարեկամութիւնը, և յերուսաղէմ Իմ համազգի
Ժողովուրդիս ցոյց տուած խնամքը արժանի ը-
րած են զինքը Իմ կայսերական բարձրագոյն շը-
նորհացս. Ուստի պատիւ կը համարիմ ինձ շը-
նորհել նա «Եթովպական Կայսրութեան Աստղ»
կոչուած պատուանչանի կարմիր ժապաւէնը, ո-
րուն արժանի է ըստ ամենայնի և կ'արտօնեմ
կրել՝ զիս յիշելու համար»:

Տուեալ ի մայրաքաղաքս Ատիս-Ապպա, ի
5(°) Հապէշական Թէր ամսոյ 1896 ամիս»:

(°) Սոյն թուականը կը համապատասխանէ
1904 յունուար 5ին:

—Կ. Պոլիս Բերայի մէջ յանկարծամահ ե-
ղած է առաջի գործարանատէր Կարապետ էֆ.
Տափուտեան, որ Գըրնափուլա փողոցին մէջ 12
հասութաբեր կալուածներ Բերայի եկեղեցւոյ
վազժ ըրած և ուրիշ բարեգործութիւններով նը-
շանաւոր հանդիսացած է:

—Ապրիլ 18 երկուշաբթի օրը վախճաներ
է Թուրքիոյ Հայ-Հռովմէականներու Պատրիարք
Տ. Պօղոս Սրբազան Էմմանուէլեան:

Այս առթիւ աւերաթ օրը տեղւոյ
Հայ-Հռովմէական եկեղեցիին մէջ հանդիսաւոր
պաշտօն կաարուեցաւ ի հանգիստ հոգւոյ հան-
գուցեալ Պատրիարքի. Սոյն արարողութեան
ներկայ գտնուեցան մեր ազգային Առաջնորդա-
րանի կողմէյն և ազգերէց Արժ. Տ. Յարութիւն Հայր
Յակոբեան, Թաղ. Խորհրդոյ կողմէ Տ. Ուղուր-

լեան և Դիւանապետ Միհրան էֆ. Թէլեան, որոնք մասնաւորապէս հրաւիրուած էին Հայ-Հռոմէականաց առաջնորդ Գեր. Սապատեան Սըրբազանին կողմէ։

—Ուրախութեամբ լսեցինք թէ տեղւոյս ծանօթ վաճառականներէն Տ. Աբրահամ Զէրքէղեան, Ամասիացի, վերջերս 250 լիրայի արժողութեամբ կալուած գնելով նուիրեք է Ամասիոյ դպրոցներուն, ինչպէս նաև ուրիշ գումար մ'ալ յատկացուցեր է Սիմ-Հաճի գիւղի դպրոցի շինութեան։

Տիար Զէրքէղեան նմանապէս Ամասիոյ դպրոցներուն յատկացուցեր է տարեկան այն 40 ոսկին, որ իրեն բաժին ինկած է Ամասիոյ մէկ պանդոկէն, ութ տարի առաջ Աղեքսանդրիոյ մէջ մեռնող իր եղբոր Տ. Յովսեփի մահուամբ իրեն ժառանգ մնացած։

Ազնիւ նուիրատուին այս օրինակելի առատաձեռնութիւնը դովելով, կը մաղթենք որ իրեն հետեւողներ ունենայ։

ՇՆՈՐՀԱՅԱԼՈՒԹԻՒՆ

Ներկայիս կը փութամ իմ ջերմ շնորհակալութիւնս յայտնել առ Մեծայարգ Տոբթոր Թախթաւաս, որ իր վերաբուժական հիանալի ճարտարութեամբ ազատեց զիս խիստ վտանգաւոր հիւանդութենէս և մէկ ամսուան մէջ առողջացուց։ Այդ առթիւ ջերմապէս կը յանձնարարեմ յիշեալ ճարտար տոբթորը՝ վերաբուժական գործողութեանց պէտք ունեցողներուն։

Դիմել Թոսուն բաշա փողոց թիւ 9 Աղեքսանդրի Թէլէֆօն թիւ 667,

Ճաշարանապետ
Խաչիկ Մուրատեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուս—Ճարտնական պատերազմը

Եալու գետի ափերուն վրայ, Ռուսերն ու Ճարտնականները դէմ դիմաց կը գտնուին, ու ըսկզբնական կռիւներ տեղի կ'ունենան։ Քանի մը օրէն հաւանաբար մեծ ճակատամարտ մը տեղի պիտի ունենայ։ Նոյն իսկ զէջէջ հեռագրի մը նայելով Ճարտնացի յառաջապահները Եալու գետն անցած և Մանչուրիա մտած են և ընդհարում մը տեղի ունեցած է։

—Ռուսական թորփիլանաւեր բաց ծովուն վրայ ճարտնական փոխադրանաւ մը բռներ են 4,000 թօնօ տարողութեամբ։ Փոխադրանաւուն

սպաները, շինուորներուն մէկ մասը անձնատուր եղեր են, իսկ մնացեալները, չուզելով անձնատուր ըլլալ, փոխադրանաւուն հետ մէկտեղ ընկղմեր են։

—Մաքարօֆի հետ ծովերուն աակը գացող Բեդրօփաւլովօքի զրահաւորէն զատ, ուրիշ զրահաւոր մըն ալ «Բօտպիէտա» սխալմամբ ականի մը (ոչ հանքային) հանդիպելով ընկղմեր է, ուրիշ թօրբիլի մը հետ որ միւսնոյն սխալը գործած էր։ Մովային ական մը (ոչ հանքային) հաստատելու ատեն 25ի չափ առաջ զինուորներու սպաներ, ճամբորդութիւն մը կատարեր են օդին մէջ, ականին անակնկալ պայթման հետեւանօք։ Կերէալ որ այս աղէտներուն մէջ առսական զօտական կարեւոր դեր մը կը կատարէ կոր։

—Իզմիրի մէջ յոյներու և թուրք զինուորներու միջև բռն կռիւ մը տեղի ունեցեր է, որովհետեւ յոյները մերժեք են վճարել նոր հաստատուած կալուածական տուրքեր։ Հելլենական հիւպատոսարանի քարտուղարը կրակ ըրեր է թուրք զինուորներու վրայ, որոնք վերաւորեր են զայն ու բանտարկեր են, բայց յետոյ ֆրանսական հիւպատոսին միջամտութեամբ ազատ արձակուեր է, Իբր թէ յունական նաւատորմը ճամբայ ելեր է դէպի Իզմիր ։։։

—Մանասգրէն կիմալունեն թէ ապստամբութեան մասնակցած ըլլալուն համար զանազան պատիժներու դատապարտուած 32 պուլկար բանտարկեալներ, որոնցմէ մին քահանայ, բանտէն փախեր են։ Երեք ստիկան զինուորներ որ անոնց փախուստը դիւրացուցած էին, իրենք ալ փախեր են։

—Դուռը կը պնդէ որ Մակեդոնիայի զինեալ ուժերի կողմէն մէջ ընդունուելիք օտարազգի ըսպաներուն թիւը 25էն աւելի չըլլայ, սակայն կառավարութիւնները կարեւորութիւն չտալով ժամ առաջ կը պահանջեն որ զօրավար Տէճիօրճիօ և մեծ պետութեանց զինուորական օգնականները Սելանիկ զրկուին։

—Քաղաքիս մէջ այս օրերս լուր տարածուեցաւ որ Սուլթան Համիտ մեռեր է։ Սուտ մը որ ամենուն սիրտը վեր հանեց պարապ տեղը։

—Նոյնպէս լուր հանեցին թէ Օրմանեան Պատրիարք ի տէր հանգեր է, մինչդեռ Հայհռօմէականաց Պաշոյ Պատրիարքն էր վախճանողը։

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Բարիկ 31 մարտ 1904

Հատոնց է որ ժողի Պերժեր իր «Եօթը մահացու մեղք» և Բարիկիանա՝ իր «Վարդ պատարագ» ռոմաններուն վերջ տուին :

«Եօթը մահացու մեղք» մեջկատակ մըն է և բաւական բարոյական մը կրնայ հանուիլ մէջէն, եթէ ռոմաններէ բարոյական կարելի է հանել :

Աղբատ ընտանիք մը — այր և կին — կը բնակին տան մը մէջ, և այն օրը՝ որ ուտելու հաց ալ չունենալուն համար կինը իր ամուսնական մատանին երկանը կուտայ որ ծախէ և հաց բերէ. երկանը մեկնելէն անմիջապէս յետոյ շիշեցիկ երիտասարդի մը (սատանային) այցելութիւնը կ'ընդունի, և քուր աշխարհի երանութիւնները իրեն տալու խոստումով կը հրապուրէ կինը և կանոնէ իր հետը կը տանի :

Էրիկը վերադարձին՝ կինը տունը չի գտնելէն խոր մտածութեան մէջ ընկած միջոցին՝ գեղեցիկ կնոջ մը (սատանային) այցելութիւնը կընդունի, որմէ կը տեղեկանայ իր կնոջ ուր գտնուիլը և կերթայ անոր ետեւէն զայն տեսնելու յոսով : Սատանան՝ եօթը մահացու մեղք բերուն իւրաքանչիւրը գործել կը հրամայէ, որոնք կը ներկայացուն իրեն գեղեցիկներու միջոցաւ : Իր կինը տեսնելու և զայն վերստին ունենալու համար երբ կը սկսի գործել այդ մեղքերը, ահա հրեշտակը կերեւնայ և ձեռքը կերկնցնէ, իսկոյն մարդը կը սթափի և զըզջումի կուգայ. վերջապէս հրեշտակին միջոցաւ կինը կը յանձնուի իր երկանը ու սատանան կը խալտառակուի :

Խաղին քուր գերակատարները, բացի ընտանիքին հայրէն, ամենքն ալ կիսամերկ աղջիկներ են :

«Վարդ պատարագ» բաւական խալտառակ է :

Հանդիսականները, գպիւրները, սարկաւագները, կարդինալները ևւայլն ամենքն ալ կիսամերկ աղջիկներ են, որոնք ի հանդէս կուգան ծաղիկներով, բսակիկ—բուրգաւներով խոշոր ժանիքներով, ևւն : Իսկ պատարագը Աստղիկն է, որուն ներշնչած սէրը յառաջ բերած է Տրոիքը, անկէ՝ Ափրոտիտեան ախարը, օրմէ այսօր վարակուած է քաղաքակիրթ աղջակ 70 010 :

Արմաշական մը, Մուշեղ վարդապետ, կարծեմ ՄԱՆԻԱՆ մէջ յօդուած մը գրելով, տարբերութիւն չէր գործած Միլոյի հրաշակերտին և Ս Կուսի մերկ պատկերին միջեւ . . . արուեստի տեսակետով : Մուշեղ վարդապետ և իր նմանները թող այնպէս ըմբռնեն. իսկ ճշմարիտ բարոյականի տէր անձինք, Աստղիկան ի տես՝ պիտի յիշեն միշտ ընտանիքներ կործանող և մարդկային սերունդը փճացնող Քրեճկի ըսուած հիւանդութիւնը, իսկ ի տես Ս Կուսի, մինչեւ իսկ մենկ պատկերին, խոր ըզմայլմը պիտի յիշեն ճշմարիտ գեղեցկութիւնը, ճշմարիտ բարոյականութիւնը և ամեն բարութեանց Աղբատի քրիստոսը :

մարիտ բարոյականութիւնը և ամեն բարութեանց Աղբատի քրիստոսը :

Քիչ մըն ալ պատշին :

Վսեմ. Լեւոն պէյ Յակոբեան բաշայի Զէյթունի աղբատաց ու վարժարաններուն համար տուած հարկեր հաշար Փրանքին և Էջմիածնապատկան կալուածներուն նկատմամբ գրած նախորդ նամակս բաւական իրարանցում առաջ բերած է մենծ աղա դասակարգին մէջ, և կասկածներ են այնպիսի անձէ մը, որ բոլորովին անմեղ է և ի վիճակի ալ չէ այդ տեսակ գրիչ գործածելու, քանի որ կրնան իր մատուցած մէջ ունեցած պաշտօնէն հանելով անօթի ձգել զինքը : Այս տողերը գրողը, ազատ գործի տէր, մէկէ մը կախում չունեցող մէկն է, որ բնաւ խաքեր համար գործ չի տեսներ, ալ ու ձախ չի նայիր և կը խորապանէ :

Այդ պատկառելի գումարը երեւան ելնելու է և անոր գոյութիւնը ապահով և հաստատուն կուտանի մը վրայ դրուելու է : Այդ գումարին տարեկան 3000 Փր. տոկոսով պէտք է կառավարուի Զէյթունի նորահաստատ արհեստանոցը՝ ուր կը յաճախեն և գրել, կարդալ ու արհեստ կը սորովին 40է աւելի աղբատ աղայք :

Բարիկի Աղբատայնամին տարեկան հանդէսին տոմսակներէն գնելու համար, երկու Ազնուհի տիկիներ, համարձակութիւնը կուենան միլիոններու տէր հայուն ալ զիմել և յանուն Բարիկի կարօտելոց օգնութիւն խնդրել : Աւելորդ է ըսել թէ ձեռնունայն ետ կը դառնան : Ոչ որ իրաւունք ունի բննագատելու Տիար Էգնաւանի այդ արարքը, զի ազատ է ուղարկել տալու և չուղարկել չտալու, մասնաւոր որ Ն. աղնուութիւնը չտուող մէկը չէ : Միայն թէ անախորժ բան մը տեղի ունեցիր է, այն ալ՝ պատուով իրեն հաւաստրակից, — չըսելու համար աւելի բարձր, — այդ երկու տիկիներուն այնպիսի ընդունելութիւն մը ըրիր և այնպիսի խօսքեր փախուցրէ բերնէն, որ տիկիները պահ մը ինքզինքնին խաւարակուան Ափրիկէի խորքը կարծիր են :

ՀՐԱՆՏ

ՎԱՀԱՆ ՄԱՄՃԱՆ

Գահիրէ Ապտինի գարադօյին դէմը, Սփինքս գեղարանին կից, և Շարա Մո համէտ ալիաթը — ֆէթ — էլ — էնէպա, թիւ 1

Կը պատահէ ոսկի ևւ արծաթէ զարդանկար միւնէլի) և զրուագեայ ցուա սննէր :

Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Հրատարակուեցաւ Ապրիլի թիւը :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

-ՕԹԵԼԼՕ-

Օրերէ ի վեր անհամբերօրէն սպասուած Օթէլլօն վերջապէս տեսանք:

Պ. Գալֆանան, որուն արուեստագիտական տաղանդէն աւելի ռէքլամասիրական ձգտումը մեզի ծանօթ էր, ամէհի Մաւրիտանացիին մօրթին տակ, նախանձի կրակուբոց ժայթքումները և վրէժի ապերասան թափերը չկրցաւ ունենալ յարատե ու երկարաշունչ կերպով: Տկարացումներ, կասումներ՝ մոլեգնութեան աստիճանական աճումին, մարդկային կիրքերուն կոյր, գլխիվայր ու յագենալու վազող այդ ցնորական խոյանքին մէջ:

Շէքսպիրի խաղերը կը նմանին այն հսկայ, գեղարուեստական շինուածքներուն որոնց իրանին մէջ չնչին որմաքարի մը խախտիլն ու իյնալը ամբողջ շէնքին փլուզումը կը վճռէ: Կամ այդ թիբերը պէտք է ներկայացնել այնպէս ինչպէս հեղինակը երեւակայած ու ոտնդժգործած է — ու ատիկա հազուագիւտ տաղանդի ու վիթխարի տշխատութեան կարօտ է — կամ բընաւ, բայց բնաւ մերձենալու չէ անոնց: Ունայն փառքիկներու հետամտութիւն մըն է բազմատարր, դժուարըմբռնելի տիպարներու թարգմանութեան կնճիռներուն մէջ մոլորիլ, անճարակ ու աննպատակ խարխափումով: Մանաւանդ որ Շէքսպիրի խաղերուն մէջ գլխաւոր, ցայտուն տիպարին քով ուրիշ ոչ նուազ կարեւոր և կրնճալի տիպարներ կը շարժին: Խաղին ամբողջութիւնը, գեղեցկութիւնը չխաթարելու համար զանոնք գիտնալու է պահել արուեստին պահանջած բարձրութեան վրայ, հզօր ու ներդաշնակ, Հոս, օրինակի համար, Օթէլլոյի քով Եակօյի ու Տէզտէմօնայի դերերը անճարակ, թոյլ, ողբալի կերպով կատարուեցան: Գալֆանանի մերթադրու, հուրքոտ, ահեղ ծառացումներուն քով Եակօ և Տէզտէմօնա ինքնաշացժ խամաճիկներ էին, անկարող այդ հզօր պատկերին ցոլացնող շրջանակ մը, յատակ մը կազմելու:

Պ. Գալֆանան որ անշուշտ արուեստին ըմբռնումը ունի, աւելի քան ու է մէկը ձեռնհաս է հասկնալու այս պարագային կարեւորութիւնը: Լաւագոյն է, այս պայմաններուն մէջ, թատերախաղը իր ամբողջութեամբը չներկայացնել, Եթէ Պ. Գալֆանան անպատճառ կը յամառի իր թատերական տաղանդը արուեստին

ընդհանուր դրամով, կրնայ՝ օրինակի համար՝ Շէքսպիրէն ներկայացնել գեղեցկագոյն հատուածներ միայն, փոխանակ ամբողջութիւն մը երեւան բերելու, այնքան խեղճօրակ դերակատարներու օժանդակութեամբ:

Ու յետոյ, չի՞ կրնար ըլլալ որ Պ. Գալֆանան իր տաղանդը ի սպաս դնէ աւելի իրական, աւելի հասկնալի, մեր բարքերուն, ըմբռնումներուն աւելի մատչելի խաղերու: Իպսէն, Տիւմա որդի Սարտու, Պոլէօ և այլն ոչ նուազ ստատարներ են արուեստագիտական տաղանդներու հանրացումին, հոչակումին և գնահատուելուն: Ընկերային արդի բարքերը նսւա՞ղ կնճիռներ, յոյզեր, գեղեցիկ ու ահաւոր խոյանքներ կը բովանդակեն, զանոնք արհամարհոտ լքման մը ենթարկելու և երթալու փարկու համար հեռաւոր, քիչ մը մտացածին, չափէն աւելի դժուար խաղերու:

Գ. Հիւրէ

ԹԻԻ 25 ԱՅՈՒՆ

Մէկը որ 11 օր կը . . . քննանայ. — Ամերիկայի մէջ մեռելներու համար մասնաւոր շէնք մը կայ, ուր կը դնեն կասկածելի մեռելները, անմիջապէս թաղելու վտանգներէն ղերժ պահելու համար զանոնք:

Թօմ անուն մէկը կը մեռնի վերջերս: Մեռելը վերցնել եկած ատեն, զարմանքով կը տեսնեն անոր սենեակին մէջ թուղթ մը որուն վրայ հետեւեալը գրուած էր. «Թէ և մեռած եմ, բայց չիս մի թաղէք»: Հետեւաբար մեռելը յիշեալ շէնքը կը փոխադրեն, ուր մինչև 10 օր կը մնայ: Բժիշկը ամէն առաւոյ կ'այցելէ խորհրդաւոր մեռելին, բայց կենդանութեան ու է նշան չգտնէր անոր վրայ: 11րդ օրը, իրիկուան դէմ յանկարծ ելեկտրական զանգակը կը ձայնէ, ազդուելով մեռելին դագաղին մէջ ըրած շարժումէն, անմիջապէս կը հասնի բժիշկը ու ապշուածութեամբ կը տեսնէ որ մեռելին վրայ կենդանութեան նշաններ երեւան եկած են: Մարդը 11 օր բան մը չուտելուն՝ դագաղին մէջ, չափազանց տկարացած էր ու աչքերը փոս մը ձեւացուցած էին: Խեղճը զոհն էր հիւանդութեան մը, որ «Գալթալէփսի» կը կոչուի և որ անխոհմութեան հետեւեալով իր շատ մը զոհերը ունեցած է, ինչպէս հին ատեն նոյնպէս ալ ներկայ ժամանակներուս մէջ:

Փոֆր Թըրասար

Ման-Թաչ. — Որովհետեւ կը պահեն և մեզի

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ՄԻԱՅՆ ԱԶԵՐԴ

Խոշոր, սեռուկ աչք աչերդ սեռեռուն՝
Հոգոյս քախիծ մղմանսն յաւելուն,
Մերք կը ժպտին սիրագորով գգունեմով՝
Ձեզուն հոգոյս երջանկութիւն նոր կեանեմով,
Մերք կը սաստեն անգրաքար վէս խոժոռ՝
Սարսի հոգիս իւր ծփանեմով քիւրսառ:
Մերք կը ձգտին շարաճմի ու աղու՝
Գերեն հոգիս, հնազանդիմ գերք ճղու:
Մերք յամառին, ու յարուած չէ՛, չէ՛ պոռան՝
Անկարեկիր քանդեն հոգոյս վէս խորան,
Դորձեալ այնպէս արքշիւ՝ սիրոյդ, նայածիդ
Կը քաղմամ որ հոգոյս խորք յաւերժ միջս,
Խորստագուի քու նայումիդ վեհ, անուշ,
Ու գգունեմ միջս քեզ պաշտելիդ Հերսեմուշ:
ԹՕՄԷՆ

ՃԱԶԱՐԱՆ ԿԻՐԻՒՄ

Սարաֆիլէ փողոց


Տնօրէնութիւն

Վահան Յովհաննէսեանի և Խաչիկ Մուրաճեանի

Ճաշարանս իր հաստատութենէն ի վեր պատ-
րաստած համադրամ կերակուրներուն պատճառաւ
փափկաճաշակ ազնիւ յաճախորդաց գնահատու-
մին և քաջալերութեանը արժանացած ըլլալուն,
այս անգամ ճաշարանը աւելի ընդարձակելով
կերակուրներու տեսակներն ալ աւելցուցան ենք:

Մեր նշանաբանն է մաքրութիւն և արագ
սպասարկութիւն, ասոնցմէ զատ, գիներն ալ
խիստ գիւրամատչելի են:

Այցելութիւն մը բաւական է մեր այս ը-
սածները հաստատելու:



Ամերիկա նոր գացող ազգային մը՝ գործ մը
գտնելու համար մեծ գործարան մը կը գիմէ,
որուն տնօրէնը կը սկսի իրեն հետ անգլիներէն
խօսիլ, բայց որովհետեւ նորեկը քան մօ չէր հաս-

կնար, նշանացի Տնօրէնէն կը խնդրէ քիչ մը ըս-
պասել, ու ինքը ճաշարան մը վաղելով, իբր
թարգման՝ ծանօթներէն մէկը կը տանի տնօրէ-
նին առջեւ որ զանազան հարցումներ կ'ուղչէ
այս վերջնայն՝ առանց սակայն պատասխան մը
ընդունելու:

Երբ տնօրէնը իր խօսքը կը վերջացնէ,
թարգմանը իւր ընկերոջը կըսէ.

— Մարգար, ըսածները հասկցար նը՝ օրայ-
քը քաշիմ:

Գաւառացի հայ մը որ Ամերիկա պիտի եր-
թար, Մարսիլիա հասնելով, պանդոկի մը մէջ ա-
միսներով ժամանակը կանցունէ խիստ թշուա-
ռութեամբ, մինչեւ որ Ամերիկայէն 10 սովի
չափ դրամ կը հասնի, որուն մէկ մասովը պարտ-
քերը կը վճարէ, բայց որովհետեւ մնացեալը ան-
բաւական էր զինքը մինչեւ վարի տշխարհ հաս-
ցնելու, ուստի մտմտութեամբ պաշարուած էր, երբ
այն միջոցին սրնսսրին մէկը կուգայ իրեն իմա-
ցրնել թէ «Խտալական նաւ մը կայ որով պիտի
կրնայ մինչև Ամերիկա երթալ թէ՛ տժան և թէ՛
հանգիստ, սակայն պէտք չէ որ այս լուրը ու-
րիշներուն իմացնէ, վասն զի նաւապետը հազիւ
մէկ երկու ճամբորդ պիտի կրնայ առնել»:

Գաւառացին համոզուելով սմարին այս խօս-
քերուն, քովը ունեցած դրամը կը յանձնէ ա-
նոր, որ կարմիր խոշոր թուղթ մը կուտայ իրեն
իբր պիլէթ, որ ուրիշ բան չէր, բայց եթէ թառ-
րոնի պարզ ազդարարութիւն մը՝ ֆրոնսերէն
գրուած, որուն պարապ մասերուն մէջ հետեւեա-
լը աւելցուցած էր, զոր կարդաց.

«Ձինքս չինքս չիքվանթա չինքս բիսթրօ,
Ամօրիօսի, Գամարիօսի, մանճառինա. կութաֆօ
մէլքօնօ»:

Գաւառացին. — Ատիկա ի՞նչ ըսել է.
Սմասրը. — Կեցիր որ թարգմանեմ. «Ձիմֆօ չիմ-
ֆօ չիմֆվանդան՝ տուած փարագ է. Ամարիօսի,
Գամարիօսին՝ սպասաւոր և սենեակ ըսել է. ման-
ճառինան՝ կերակուրի համար կըսեն. կութաֆօ
մէլքօնօն ալ՝ անունդ՝ Մելքօն կութաֆեան ը-
սել է. հիմա չիտակ վաբօր գնա»:

Խեղճ գաւառացին շոգենաւ կը մտնէ որուն
մեկնելէն առաջ երբ Բ. նաւապետը ըստ ոովո-
րութեան տոմսակները աչքէ կանցունէր՝ կը տես-
նէ որ Բրիւքսլ թատրոնի ազդարարութիւնը իբր
պիլէթ ծախուած է. կը խնդայ և մարդուն կը
հասկցնէ խաբուած ըլլալը, որ չափազանց զար-
մացած ինքզինքը շոգենաւէն դուրս կը նետէ
Թաւառական ստեղծարար տնտես համար

բան միշտ կրկնելով, «չան տղայ, եախադ ձեռ-
քըս անցնի նէ՝ քեզի պիտի սորվեցնեմ չինքս
չինքս չիքվանթա չինքս»:

Տիկին Սադեհնիկ նոր սպասուհի մը բռնած
ըլլալով, առաջին օրը կըսէ.

— Ինձի նայէ, մենք նախաճաշը առտուն
ժամը ծին կընենք, գիտցած ըլլաս.

— Շատ լաւ, տիկին, բայց եթէ ճիշդ այն
ժամուն ելած չըլլամ, կ'աղաչեմ որ ինձի չ'ըս-
պասէք.

Վարսալիբայի խանութը.

— Սա անցնող Տիկին Յ. այնչափ մազ ունի
որ մէկ քամէն հազիւ կրնայ սանտրել.

— Իրե՛նն են մազերը, կը հարցնէ յաճա-
խորդներէն մէկը.

— Օհ, այո՛, պարոն, կը պատասխանէ վար-
սալիբան, եւ ծախեցի իրեն. ԱՇԽԱՐՀ

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ «ՀԱՅԵԼԻ»

Աղեփսանդիս

Սարաճիյէ, Կիլիկեան Ճաշարանի բովի քառաժին
մէջ.

ՏՊԱՐԱՆ. — Գիւրաժատչիի գիներով կը տպագ-
րուին Հայերէն, ֆրանսերէն, Արաբերէն, Անգլիերէն
և Յունարէն այցեւորոս, հասցէտոս, նամակագրութիւն,
պահարան, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, յայ-
տարարութիւններ, ևն:

ԳՐԱՏՈՒՆ. — Վաճառում և գնումն Գրաստան,
Գիտական, Վիպական և Թատերական գիրքերու.

Վաճառում և գնումն ամեն տեսակ նամակադրոշ-
մերու.

Վաճառումն Հայկական, Եզրագրական ու Եւրո-
պական գունաւոր և բազմատեսակ Բաւթ-Բօսթերու.

Վաճառումն գրական պիտոյքներու՝ թուղթ, գրիչ,
տետրակ, պահարան, մեխան. ևն:

Կեդրոն բաժանորդագրութեան արտասահմանեան
Հայ թերթերու և հանդէսներու.

Հասցէ. — Տիրան Փափագեան

Սարաճիյէ

Աղեփսանդի

ԶՄԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԸՏԸՏԻՄԵԱՆ

Թրիպուռնալի ետին՝ հօթէլ «էն ժօրթի կիջ».

Ամեն տեսակ լաւ նպատեղեցւորէ գաս. Զմիռ-
նիայէն քերուած ընտիր օղի, զինի, ձէք, կարագ,
աճառ, տոփերով գոնետփաներ, պատրաստ անու-
շեղէն եւ ոշտրանկեր՝ նարինջ, բալ, բարձր ընկոյզ
եւ յում (գըզընդ). նաեւ Արաշեհիի հանփային
ջուրը որ դժուարամարտութիւնը կը դարձանէ.

Սոյն վաճառատունը կը խոստանայ իրեն դի-
մող յաճախորդները գոնացնել անխաղախ անպ-
րանքներով եւ գիներու չարաւորութեամբը.

Մեր այս դասը հաստատելու համար այցե-
լորթիւն մը քաւական է.

Մեծաքանակ ու փոքրաքանակ յաճախա-
րութիւն անմիջապէս կը կատարուին.

ՏՕՔԻՕՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքաւանդ
Իշխանիւն

Այս անգամ Աղեփսանդիս հաստատուած չի-
նելով, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հա-
սարակութեան. որ ամեն օր առաջօրէն ժամը
9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կըն-
դունի իր քան մէջ. Աթթարին փողոց թիւ 31,
Մզկիթին դէմը, երկրորդ յարկ.

Ներքին եւ փրաքութեան հիւանդութիւննե-
րու հետ, կը դարձանէ նաեւ երախաներու հիւան-
դութիւնները, 15 արոյն մասնագիտական փորձա-
նութեամբ.

Յաջող կերպով կը դարձանէ նաեւ Աժիոնա-
ւորութիւնը եւ Մորժիւնաւորութիւնը, որոնց դէմ
հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ
Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս թողած
են այդ մոլորութիւնը. 2

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒԹՈՒՆԵԱՆ

Նոր Բաղդիւր պատկերազարդ, Յրանաւանդ
Երկու հատոր՝ 1874 մեծադիր երեսներով.

Ազգ. — Մատենագիրն փափաքելով որ իր երկասի-
րութիւնն մատչելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-
նաւանդ որ իւր նպատակն է ամենին չըսել, այլ փա-
սով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորնե-
րը ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն.

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով.

M. G. DE LUSIGNAN

108. Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ.